Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
«ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

Հոդված 3. Ազգային անվտանգության մարմինների ծառայողների պաշտոնների խմբերը և ազգային անվտանգության մարմինների ծառայողների պաշտոնների անվանացանկը

(վերնագիրը լրաց. 11.06.14 ՀՕ-64-Ն)

1. Ազգային անվտանգության մարմինների ծառայողների պաշտոնները դասակարգվում են հետևյալ խմբերի.

1) ազգային անվտանգության մարմինների ծառայողների բարձրագույն պաշտոններ՝

~~ա) Ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ պետական լիազոր մարմին) ղեկավար,~~

բ) Ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ պետական լիազոր մարմին) ~~լիազոր մարմնի~~ ղեկավարի տեղակալ.

գ) պետական պահպանության ծառայության պետ.

2) ազգային անվտանգության մարմինների ծառայողների գլխավոր պաշտոններ՝

պետական լիազոր մարմնի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների (դեպարտամենտ, գլխավոր վարչություն, վարչություն, բաժին և այլն) պետեր և նրանց տեղակալներ, պետական պահպանության ծառայության պետի տեղակալներ.

3) ազգային անվտանգության մարմինների ծառայողների ավագ պաշտոններ՝

ոչ ինքնուրույն ստորաբաժանումների (վարչություն, բաժին, բաժանմունք, վարչության բաժին և այլն) պետեր և նրանց տեղակալներ.

4) ազգային անվտանգության մարմինների ծառայողների միջին պաշտոններ՝

սույն հոդվածի առաջին մասի 1-3-րդ և 5-րդ կետերում չընդգրկված պաշտոններ.

5) ազգային անվտանգության մարմինների ծառայողների կրտսեր պաշտոններ՝

ենթասպաներով համալրվող պաշտոններ:

2. Ազգային անվտանգության մարմինների ծառայողների պաշտոնների գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերը կարող են բաժանվել ենթախմբերի:

3. Ազգային անվտանգության մարմինների ծառայողների պաշտոնների առանձին խմբերում ընդգրկվող հիմնական պաշտոնների, ինչպես նաև այդ պաշտոններին հավասարեցված պաշտոնների անվանացանկը սահմանում է վարչապետը:

4. Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության մարմինների համակարգերում զինվորական ծառայության հիմնական պաշտոնների, քրեակատարողական և փրկարար ծառայությունների հիմնական պաշտոնների միջև համապատասխանությունը սահմանում է Կառավարությունը:

(3-րդ հոդվածը լրաց. 14.12.04 ՀՕ-132-Ն, լրաց., խմբ. 11.06.14 ՀՕ-64-Ն, փոփ., լրաց. 23.03.18 ՀՕ-269-Ն)

Հոդված 19. Ազգային անվտանգության մարմինների ծառայողին պաշտոնի նշանակելու պայմանները

1. Պետական լիազոր մարմնի ղեկավարը պետք է բավարարի պատգամավորին ներկայացվող պահանջները ~~կարող է նշանակվել ազգային անվտանգության մարմինների այն ծառայողը, ով մինչև նշանակումն զբաղեցրել է ազգային անվտանգության մարմինների ծառայողների բարձրագույն խմբի~~

~~պաշտոն կամ առնվազն 3 տարի զբաղեցրել է գլխավոր խմբի պաշտոն և ունի գնդապետից ոչ ցածր կոչում~~:

2. Պետական լիազոր մարմնի ղեկավարի տեղակալ կարող է նշանակվել ազգային անվտանգության մարմինների այն ծառայողը, ով մինչև նշանակումն զբաղեցրել է ազգային անվտանգության մարմինների ծառայողների բարձրագույն խմբի պաշտոն կամ մինչև նշանակումը առնվազն 3 տարի զբաղեցրել է ազգային անվտանգության մարմինների ծառայողների գլխավոր խմբի պաշտոն և ունի գնդապետից ոչ ցածր կոչում:

3. Ազգային անվտանգության մարմինների ծառայողների գլխավոր խմբի պաշտոններում ատեստավորման արդյունքում կարող են նշանակվել այն ծառայողները, ովքեր մինչև նշանակումը վերջին մեկ տարին զբաղեցրել են ազգային անվտանգության մարմինների ծառայողների գլխավոր խմբի այլ պաշտոն կամ մինչև նշանակումը վերջին երեք տարին զբաղեցրել են ազգային անվտանգության մարմինների ծառայողների ավագ խմբի որևէ պաշտոն:

Ազգային անվտանգության մարմինների ծառայողների գլխավոր խմբի պաշտոններում կարող է նշանակվել նաև ազգային անվտանգության մարմինների ծառայողների բարձրագույն խմբի պաշտոն զբաղեցրած ծառայողը:

4. Ազգային անվտանգության մարմինների ծառայողների ավագ և միջին խմբերի պաշտոններում ծառայողների առաջխաղացումը կատարվում է ատեստավորման արդյունքում՝ տվյալ պաշտոնում առնվազն մեկ տարի ծառայելուց հետո:

5. Ազգային անվտանգության մարմինների ծառայողների կրտսեր խմբի պաշտոններում նշանակումները կատարվում են առանց ատեստավորման:

6. Ազգային անվտանգության մարմինների ծառայողների ավագ և միջին խմբերի պաշտոններում նշանակումը կատարվում է միմիայն բարձրագույն կրթության առկայության դեպքում:

Ազգային անվտանգության մարմինների ծառայողների կրտսեր խմբերի պաշտոններում նշանակումը կատարվում է առնվազն միջնակարգ կրթության առկայության դեպքում:

6.1. Պետական լիազոր մարմնում թափուր պաշտոն առաջանալու դեպքում ծառայության կարող են նշանակվել նաև զինված ուժերի, ոստիկանության, Հարկադիր կատարումն ապահովող ծառայության, քրեակատարողական ծառայության մարմինների, քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության և արդարադատության նախարարության պետական ծառայողներ, դատախազներ, ինչպես նաև ազգային անվտանգության մարմինների պահեստազորի սպաներ, որոնք բավարարում են տվյալ պաշտոնին նշանակվելու համար ազգային անվտանգության մարմինների ծառայողներին ներկայացվող պահանջները:

6.2. Սույն հոդվածի 6.1-րդ մասով նախատեսված պետական մարմինների և ազգային անվտանգության ծառայության պաշտոնների համապատասխանությունը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7. Ազգային անվտանգության մարմիններում ծառայողը կարող է նշանակվել առաջին պաշտոնի, բարձր պաշտոնի, հավասար պաշտոնի և ցածր պաշտոնի: ***(նախադասությունները հանվել են 12.12.13 ՀՕ-163-Ն)***

(19-րդ հոդվածը լրաց. 14.12.04 ՀՕ-132-Ն, փոփ., խմբ., լրաց. 22.05.08 ՀՕ-44-Ն, փոփ. 12.12.13 ՀՕ-163-Ն, լրաց., փոփ. 13.06.16 ՀՕ-94-Ն, 23.03.18 ՀՕ-269-Ն)